



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2014 թվականի N Մ - 634 - Ա

քաղ. Երևան

«ՖՈՔՐՍ ՕՆ ՉԻԼԴԵՆ ՆԱՈՒ, ԻՆԿ.» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ
ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՑՑ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N 3/3.8-2/9090 -14 և հունիսի 18-ի N 06/5-1/7380-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N ՖԲ/ԱնՄ-4/4751-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հունիսի 20-ի N 03/07-1/7065-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 16-ի N ԱՄ/22.2/5965-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Ֆոքրս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռի (558 տեղ, 10,174 կգ ընդհանուր քաշով, 173,810 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7,796 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բեռի բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. «Ֆոքրս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպության` նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում` սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության

կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզպետարաններ ու Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ